ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.1. Ընթացիկ իրավիճակի գնահատում

Առաքելության փորձագետներ

Տիկին Անեգրետ Վուլֆ, Դանիայի վիճակագրություն
Պարոն Քարսթեն Զանգենբերգ, Դանիայի վիճակագրություն

2015թ. նոյեմբերի 2-6

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

STATISTICS DENMARK

Փորձագետների կոնտակտային տվյալներ

Անեգրետ Վուլֆ
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ.՝ +45 3917 3155
Էլ. հասցե՝ awu@dst.dk

Քարսթեն Զանգենբերգ
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ.՝ +45 3917 3941
Էլ. հասցե՝ cuz@dst.dk

Բովանդակություն

ծառայություն 3
1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ 7
4. Ճանապարհային քարտեզ և ժամանակային պլան 7
Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք 9
Հավելված 2: Առաքելության ծրագիր 12
Հավելված 4: Սպառողների համառոտ հետազոտություն 16
Հավելված 6. Շահառուների հետ հանդիպման վերաբերյալ մամուլի լուսաբանում 23

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա առաջին բաղադրիչի առաջին առաքելությունն էր, որի գործողություններն իրականացվել են առաքելության ծրագրի ժամանակացույցի համաձայն:

Առաքելության նպատակներն էին.

- Վերջին Թվինինգ ծրագրից հետո զարգացման և ընթացիկ իրավիճակի գնահատում
- ՀՀ ԱՎԾ գործող տարածման ռազմավարության ներկայացում
- Տարածման ռազմավարության մեջ ընդգրկման ենթակա հարցերի քննարկում և առաջարկություն վերանայումների համար
- Ներդրում՝ ուղղորդելու, թե ինչպես հաղորդակցվել արտաքին շահագրգիռ կողմերի և հանրության հետ, օրինակ սխալների կամ վիճակագրական հրապարակումներում տեղ գտած տվյալների սխալ օգտագործման դեպքում
- Ներդրում վերանայման քաղաքականության հարցերում
- Քննարկում հատուկ վիճակագրության վերաբերյալ ուղղորդման հարցերի շուրջ
- Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում քննարկումներում

Փորձագետները կցանկանային իրենց անկեղծ երախտիքը հայտնել բոլոր պաշտոնյաներին և անհատներին Հայաստան կատարած այցի ընթացքում աջակցության և արժեքավոր տեղեկության համար, ինչը մեծապես նպաստել է իրենց աշխատանքին: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԵՄ, ՀՀ ԱՎԾ և Դանիայի վիճակագրական ծառայության կարծիքների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Տեխնիկական նկարագրման մեջ նշված են հետևյալ գործողությունները.

- Գնահատված է ընթացիկ իրավիճակը
- Ներկայացված է առաջարկություն՝ տարածման ռազմավարության նախագիծը բարելավելու վերաբերյալ
- Առաջարկություն հաղորդակցության և վերանայման քաղաքականությունների վերաբերյալ
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանված է (1.2-ը ծրագրված է 2015թ. դեկտեմբերի 7-10)

ՀՀ ԱՎԾ-ն պատրաստել էր համապարփակ նյութեր տարածման հայեցակերպերի սկզբունքների և քաղաքականությունների վերաբերյալ: Հայեցակարգի մասին փաստաթուղթը վիճակագրության արտադրման և տարածման համար ամուր հիմք է

հանդիսանում՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա. ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները եվրոպական վիճակագրության համար:

Փորձագետները փաստաթղթի վերաբերյալ քննարկում ունեցան ՀՀ ԱՎԾ փորձագետների հետ և առաջարկեցին կենտրոնանալ և ավելի բացահայտ կերպով ծավալվել տարածման տարբեր պարունակող սկզբունքների շուրջ:

- Համապատասխանություն
- Ճշգրտություն և վստահելիություն
- Ցուրաժամանակություն և ճշտապահություն
- Կապակցվածություն և համադրելիություն
- Հասանելիություն և պարզություն



Ի հավելումն հայեցակարգային փաստաթղթի, առաջարկվում է կառուցել ռազմավարական շրջանակ, որը կարող է ներառել.

- Ո՞ր հիմնական նպատակների տարածումը պետք է ձգտել բարելավել («ինչո՞ւ»)
- Այդ բարելավման գործընթացում ի՞նչ միջոցներ պետք է կիրառվեն («ինչո՞ւ»)
- Ի՞նչ գործողություններ և նախաձեռնություններ կձեռնարկվեն («ի՞նչ»)





ՀՀ ԱՎԾ-ն արդեն իսկ ունի վերանայման հստակ քաղաքականություն: Այն ընդգրկում է պատմական շարքերի ընթացիկ վերանայումները, որոնք իրականացվում են ամսեկան, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ: Վերանայման սկզբունքները պետք է մատչելի լինեն արտաքին սպառողների համար, որպեսզի խուսափել քննադատությունից և թերըմբռնումից, երբ տվյալները վերանայվում են կամ փոփոխվում:

5-10 տարի պարբերականությամբ տեղի ունեցող համալիր վերանայումների մասին պետք է հայտարարել նախապես, իսկ ակնկալվող արդյունքները պետք է բացատրվեն: Կարելի է նաև դիտարկել հիմնական սպառողներին տեղեկատվական հանդիպումներին հրավիրելու հնարավորությունը:

ՀՀ ԱՎԾ-ն ուղղում է հայտնաբերված սխալները թվային հրապարակումներում: Տպագիր հրապարկումներում ուղղված սխալները հրապարակվում են հաջորդական հրապարակված տարբերակներում: Պետք է քննարկել՝ արդյոք ՀՀ ԱՎԾ-ն կարող է լուրջ սխալների մասին ծանուցել սպառողներին ավելի ակտիվորեն, հնարավորության դեպքում պաշտոնական կայք էջում և մամուլի միջոցով:

Տեղի ունեցան երկու բավականին հաջող աշխատաժողովներ. առաջինը ՀՀ ԱՎԾ տարբեր բաժինների անձնակազմի հետ, մյուսը՝ արտաքին շահագրգիռ կողմերի հետ, որին ներկա էր գտնվում նաև ներկայացուցիչ մամուլից՝ արմինֆո հանդիպումը լուսաբանելու համար: Առաջին հանդիպման ժամանակ, որին ներկա էին 19 տարբեր բաժիններից 40 աշխատակիցներ, փորձագետները ներկայացրեցին ռազմավարական աշխատանքի և սպառողների ներգրավվածության իրենց փորձը: Շահագրգիռ կազմակերպություններից 47 ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում փորձագետները ներկայացրեցին տարածման բաղադրիչները: Շահագրգիռ կազմակերպությունների հետ հանդիպումը լուսաբանվեց նաև մամուլում:

ՀՀ ԱՎԾ-ի հետ ներքին հանդիպման ժամանակ ներկայացվեց ռազմավարության հետ կապված սպասվող աշխատանքը, և փորձագետները ներկայացրեցին տարածման ռազմավարության և սպառողների ներգրավվածության վերաբերյալ իրենց փորձը (շնորհանդեսները հասանելի են ծրագրի կայք էջում. http://www.dst.dk/en/consulting/projects/armenia2015/component1).

Արտաքին շահառուների շրջանում իրականացվեց սպառողների բավարարվածության համառոտ հետազոտություն: Հետազոտության կառուցվածքը և արդյունքները կցված են հավելվածում:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

ՀՀ ԱՎԾ-ն պետք է ռազմավարության նախագիծը ձևակերպի արտաքին օգտագործման համար պատշաճ ձևաչափով, որը հասանելի լինի պաշտոնական կայքում: Պետք է լինեն հղումներ հայեցակարգային փաստաթղթին:

Ռազմավարության պատրաստ լինելուն պես պետք է ևս մեկ անգամ հրավիրել շահագրգիռ կողմերին՝ նրանց ակնկալվող գործողությունների մասին տեղեկացնելու և ակնկալիքները բավարարելու նպատակով:

ՀՀ ԱՎԾ-ն սպառողներից ստանում է քիչ թե շատ նման հարցումներ և այս հատուկ հարցերին պատասխանելը պահանջում է բավականին ռեսուրսներ: Առաջարկվում է սկսել գրանցել այս հարցումները համակարգված ձևով՝ դասակարգելով դրանք խմբերով ըստ թեմայի, սպառողի խմբի և պատասխանի: Դա կարելի է անել հավելվածի տեսքով: Ավելի մատչելի տարբերակ է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք էջում ստեղծել հաճախ տրվող հարցերի բաժին: Համակարգված և կենտրոնացված գրանցման միջոցով ՀՀ ԱՎԾ-ն հնարավորություն կունենա փաստել այս գործողությունների ծավալը: Ի լրումն, կարող է լինել համաժամանակյա հարցումներին տրվող պատասխանների վերաօգտագործման հնարավոր հիմնավորում:

4. Ճանապարհային քարտեզ և ժամանակային պլան

Առաջիկա առաքելությունների, ինչպես նաև ուսուցողական այցի նախապատրաստման համար անհրաժեշտ գործողություններ.

- Առաքելություն 1.2 (դեկտեմբեր 2015).
    - Մշակել հայեցակարգային փաստաթղթի նախագիծ սպառողների խմբերի և սպառողների կարիքների վերաբերյալ
    - Հստակեցնել սպառողների հարցման համակարգված գրանցման հայեցակարգը (հեռախոս, էլեկտրոնային փոստ, փոստ)

- Ուսուցողական այց Դանիայի վիճակագրություն (հունիս 2016).
    - Տարածման ռազմավարության մշակման կեսճանապարհային կարգավիճակը
    - Տարածման ռազմավարության շրջանակում քննարկել ենթառազմավարություններ
    - Քննարկել ԱՎԻ (Ազգային վիճակագրական ինստիտուտի) ընդհանուր ռազմավարության և տարածման ռազմավարության միջև փոխազդեցությունները
    - Աշխատանք ԵՄ փորձագիտական գնահատման հիման վրա արված առաջարկությունների ուղղությամբ

- Առաքելություն 1.5 (սեպտեմբեր 2016).
    - Տարածման ռազմավարության վերաբերյալ հաջորդ առաքելությունը
    - Տարածման ռազմավարության նախագծի և գործողությունների պլանի վերջնական քննարկում

- հուլիս 2017.
    - Տարածման ռազմավարության վերջնական տարբերակը հաստատված է Վիճակագրության պետական խորհրդի կողմից

Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15

2015թ. նոյեմբերի 2-6

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.1. Ընթացիկ իրավիճակի գնահատում. Տարածման ռազմավարության նախնական քննարկում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Վերջին Թվինինգ ծրագրից հետո զարգացման և ընթացիկ իրավիճակի գնահատում
- ՀՀ ԱՎԾ գործող տարածման ռազմավարության ներկայացում
- Տարածման ռազմավարության մեջ ընդգրկման ենթակա հարցերի քննարկում և առաջարկություն վերանայումների համար
- Ներդրում՝ ուղղորդելու, թե ինչպես հաղորդակցվել արտաքին շահառուների և հանրության հետ, օրինակ սխալների կամ վիճակագրական հրապարակումներում տեղ գտած տվյալների սխալ օգտագործման դեպքում
- Ներդրում վերանայման քաղաքականության հարցերում
- Քննարկում հատուկ վիճակագրության վերաբերյալ ուղղորդման հարցերի շուրջ
- Համապատասխան շահառուների ներգրավում քննարկումներում

2. Գործողության սպասվող արդյունք

- Գնահատված է ընթացիկ իրավիճակը

- Ներկայացված է առաջարկություն՝ տարածման ռազմավարության նախագիծը բարելավելու վերաբերյալ
- Առաջարկություն հաղորդակցության և վերանայման քաղաքականությունների վերաբերյալ
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանված է (1.2-ը ծրագրված է 2015թ. դեկտեմբերի 7-10)

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչների ղեկավարներ
- Պարոն Ստեփան Մնացականյան
- Տիկին Անահիտ Սաֆյան
- Տիկին Նարինե Մուշեղյան

Այլ
- Տիկին Սիլվա Ուլուբաբյան
- Տիկին Նելլի Մարգարյան
- Տիկին Գոհար Նշանյան
- Տիկին Ալինա Հունանյան
- Տիկին Արմինե Մարտիկյան
- Տիկին Լիլիտ Կարապետյան

<u>ԱԵ փորձագետներ</u>
Տիկին Անեգրետ Վուլֆ, փորձագետ, Դանիայի վիճակագրություն
Պարոն Քարսթեն Զանգենբերգ, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

<u>Գործողությանը մասնակցող այլ շահառու կազմակերպություններից հրավիրված ներկայացուցիչներ</u>
Նաև ներկայացուցիչներ, որոնց պետք է հրավիրել

- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ
- ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ
- Հայաստանում ԱՄՀ ներկայացուցչության ներկայացուցիչ (ԱՄՀ)
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) ներկայացուցիչ

- ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացուցիչ (UNDP)
- ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչ (UNFAO)
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչ (EBRD)
- Համաշխարհային բանկի գրասենյակի ներկայացուցիչ (WB)
- Հայաստանում ԵՄ պատվիրակության ներկայացուցիչ
- Ասիական զարգացման բանկի գրասենյակի ներկայացուցիչ (ADB)
- «Առկա» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- «Արմենպրես» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- «Արմինֆո» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- «Մեդիամաքս» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- Հայաստանի Հանրային ռադիոյի ներկայացուցիչ
- Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչ
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ներակայացուցիչ
- ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ներկայացուցիչ

Հավելված 2: Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, կեսօր	Հյուրանոց/ ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երկուշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ *In meeting room*	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջին Թվինինգ ծրագրից հետո զարգացման և ընթացիկ իրավիճակի գնահատում ՀՀ ԱՎԾ-ում ընթացիկ տարածման ռազմավարության ներկայացում Փորձագետների կողմից ներկայացում տարածման ռազմավարության և սպառողների ներգրավվածության վերաբերյալ
Երեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տարածման ռազմավարության մեջ ընդգրկման ենթակա հարցերի քննարկում և առաջարկություն վերանայումների համար
Երեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ներդրում՝ ուղղորդելու, թե ինչպես հաղորդակցվել արտաքին շահագրգիռ կողմերի և հանրության հետ, օրինակ սխալների կամ վիճակագրական հրապարակումներում տեղ գտած տվյալների սխալ օգտագործման դեպքում
Չորեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ներդրում վերանայման քաղաքականության հարցերում
Չորեքշաբթի, կեսօրից հետո, ժամը 15:00	ՀՀ ԱՎԾ *Հանդիպումների դահլիճում*	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ
Հինգշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկում՝ ինչպես ուղղորդել հատուկ վիճակագրությունը
Հինգշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների	Ամփոփել և նախապատրաստվել առաքելության հաշվետվության համար

		հետ	
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Չպլանավորված հանդիպումներ	Վեջնական պարզաբանումներ ԱԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, առաջարկություններ և ՇԵ փորձագետների հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիր

Հավելված 3: Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Նարինե Մուշեղյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Նելլի Մարգարյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Արմինե Մարտիկյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Ալինա Հունանյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Գոհար Նշանյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Սիլվա Ուլաբաբյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Լիլիթ Կարապետյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Լաուրա Գրիգորյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
Ռուզաննա Վարդանյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
Լուսինե Քալանթարյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
Սուսան Հունանյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
Սիրանուշ Զեյնալյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
Մարինա Պետրոսյան, Շինարարության վիճակագրության բաժին
Անահիտ Նազարյան, Շինարարության վիճակագրության բաժին
Աիդա Մարտիրոսյան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
Սոնա Շահգելդյան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
Գայանե Ներսիսյան, Տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժին
Արսեն Օհանջանով, Ֆինանսների վիճակագրության բաժին
Լիանա Շահբազյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
Հայկուշ Թիթիզյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
Ասյա Պոդպոմոգովա, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
Անահիտ Նազարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
Հասմիկ Հովհաննիսյան, Արդյունաբերության վիճակագրության բաժին
Լիանա Ալեքսանյան, Արդյունաբերության վիճակագրության բաժին
Արմինե Ստեփանյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
Դիանա Անանյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին
Անահիտ Ավետիսյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
Մանուշակ Խաչատրյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
Գոհար Հարությունյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին

Հասմիկ Կարապետյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Աիդա Բաղալյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
Լուսինե Մարկոսյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
Աննա Անտոնյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
Ռուզաննա Բաղդասարյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
Աննա Գրիգորյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Վարսիկ Սենեքերիմյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Հասմիկ Սողոմոնյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Ռուզաննա Շաբոյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Հասմիկ Եղիազարյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Լուսյա Մարկոսյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
Նադեժդա Աստվածատուրովա, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
Կարինե Արամյան, Բիզնես ռեգիստրի բաժին
Լաուրա Սարգսյան, Բիզնես ռեգիստրի բաժին
Աստղիկ Սաֆյան, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին

Արտաքին շահառուներ

Ալեսանդրո Զանոտտա, Հայաստանում ԵՄ պատվիրակություն
Մարիամ Հովհաննիսյան, Արմենպրես
Ալինա Հովհաննիսյան, Արմինֆո
Գոհար Հարությունյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Արմենակ Աղաջանյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Արթուր Պետրոսյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Անահիտ Բարսեղյան, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասմիկ Իսախանյան, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Գոհար Գրիգորյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Լյուդմիլա Սողոմոնյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Լուսինե Ավետիսյան, ՀՀ բնապահպանության նախարարություն
Ջուլիետա Ղլիջյան, ՀՀ բնապահպանության նախարարություն
Սուրեն Վարդանյանց, ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Գայանե Ավետիսյան, ՀՀ ֆինանսների նախարարություն
Ռուզաննա Ղլեչյան, ՀՀ մշակույթի նախարարություն
Դավիթ Եպիսկոպոսյան, ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Ալիկ Գրիգորյան, ՀՀ պաշտպանության նախարարություն
Վահրամ Ջանվելյան, Հայաստանում ԱՄՀ ներկայացուցչական գրասենյակ
Կարեն Հակոբյան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Վիճակագրության ամբիոն
Ավետիս Գևորգյան, ՀՀ հանրային կառավարման ակադեմիա
Դիանա Աֆյան, ՀՀ կենտրոնական բանկ

ԹՄԽ աշխատակազմ
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու
Մարգարիտ Բեջանյան, ԹՄԽ օգնական
Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ

Հավելված 4: Սպառողների համառոտ հետազոտություն

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1) Տեղյա՞կ եք պաշտոնական վիճակագրության թողարկման օրացույցի մասին: Այո ☐ Ոչ ☐

2) Օգտագործու՞մ եք մեթոդաբանություն/փաստաթղթավորում կապված վիճակագրության հետ: Այո ☐ Ոչ ☐

3) Ի՞նչ աղբյուրներից եք օգտվում:

- ☐ *amstat.am (armstat.info)*
- ☐ *armstatbank.am*
- ☐ *ArmeniaInfo*
- ☐ *Մամուլի հաղորդագրություններ*
- ☐ *Հրապարակումներ*
- ☐ *Այլ(խնդրում ենք մասնավորեցնել)……..*

4) Դուք Ձեզ տեղեկացված զգու՞մ եք հրապարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների դեպքում: Այո ☐ Ոչ ☐

5) Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը՞ պետք է բարելավի:

- ☐ *Որակ*
- ☐ *Ցուրաժամանակություն*
- ☐ *Համապարփակություն*
- ☐ *Այլ (խնդրում ենք մասնավորեցնել)……..*

6) ԱՎԾ-ն օգտվում է տարբեր աղբյուրներից՝ վիճակագրություն արտադրելու համար (համատարած հաշվառում, վարչական ռեգիսրներ և ընտրանքային հետազոտություններ).

Խնդրում ենք ներքևում նշել, թե որքան եք վստահում այդ 3 տվյալների աղբյուրներից յուրաքանչյուրին:

	Բարձր վստահություն	Միջին վստահություն	Ցածր վստահություն
համատարած հաշվառում			
վարչական ռեգիսրներ			
ընտրանքային հետազոտություններ			

Ի՞նչ եք ներկայացնում: ☐ Նախարարություն ☐ Միջազգային կազմակերպություն ☐ Լրատվամիջոց ☐ Այլ

This project is funded by the European Union

Շնորհակալություն համագործակցության համար: ☺

Սպառողների համառոտ հետազոտություն
Ամփոփում

Եվրամիության Թվինինգ ծրագրի շրջանակում 2015թ. նոյեմբերի 4-ին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում վիճակագրական տեղեկատվության սպառողների համար կազմակերպված սեմինարի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 47, որից «Սպառողների համառոտ հետազոտություն» հարցաթերթի լրացմանը մասնակցել է 40-ը կամ նրանց 85.1%-ը:

Ամփոփումից պարզվել է, որ նրանցից 18-ը կամ 45.0%-ը նախարարությունների ներկայացուցիչներ են, 2-ը կամ 5.0%-ը՝ լրատվամիջոցների, 20-ը կամ 50.0%-ը՝ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: **Հարցաթերթի հարցերն առանձին-առանձին ուսումնասիրելով պարզ է դարձել, որ.**

1. **«Տեղյա՞կ եք «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցի» մասին»** հարցին լրացնողերից 36-ը կամ 90.0%-ը պատասխանել է «այո»:



2. **«Օգտագործու՞մ եք մեթոդաբանություն/փաստաթղթավորում՝ կապված վիճակագրության հետ»** հարցին լրացնողներից դրական է պատասխանել է 35-ը կամ 87.5%-ը:



3. «**Ի՞նչ աղբյուրներից եք օգտվում»** հարցին 40 լրացնողները նշել են 117 նշում, որից 39-ը կամ 33.3%-ը **նշել է, որ օգտվում է՝** *www.armstat.am (հայելային կայքէջ www.armstat.info)*-ից, 21-ը կամ 17.9%-ը՝ *www.ArmStatBank.am*-ից, 27-ը կամ 23.1%-ը՝ հրապարակումներից, 14-ը կամ 12.0%-ը՝ **մամուլի հաղորդագրություններից** , 11-ը կամ 9.4%-ը՝ *www.ArmDevInfo.am* –ից և միայն 5-ը կամ 4.3%-ն է, **որ օգտվում այլ աղբյուրներից:**

(%)



4. **«Դուք Ձեզ տեղեկացված զգու՞մ եք հրապարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների դեպքում»** : Հարցվողներից ընդամենը 19-ը կամ 47.5%-ն է նշել, **որ տեղեկացված է:**



5. **«Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը՞ պետք է բարելավի»** հարցին 40 լրացնողներից եղել է 52 գրառում: Նրանցից 21-ը կամ 40.3%-ը նշել է, որ պետք է բարելավվի որակը, 19-ը կամ 36.6%-ը՝ համապարփակությունը, 7-ը կամ 13.5%-ը՝ յուրաժամանակությունը, 5-ը կամ 9.6%-ն էլ՝ նշել է «այլ»:

(%)



6. **«Վիճակագրություն արտադրելու համար ՀՀ ԱՎԾ-ն օգտվում է տարբեր աղբյուրներից՝ համատարած հաշվառում, վարչական ռեգիստրներ և ընտրանքային հետազոտություններ»** հարցին արձանագրվել է 120 նշում , որից 30-ը կամ 25.0%-ը ընդգծել է «բարձր վստահություն», 77-ը կամ 64.2%-ը՝ «միջին վստահություն», 13-ը կամ 10.8%-ը՝ «ցածր վստահություն»:

Հարկ է նշել, որ լրացնողներից 13-ը կամ 32.5%-ը «բարձր վստահություն» է նշել «Համատարած հաշվառման»-ը, «միջին վստահություն»՝ 26-ը կամ 65.0%-ը, «ցածր վստահություն»՝ 1-ը կամ 2.5%-ը: «Վարչական ռեգիստրներին» «բարձր վստահություն» է նշել 10-ը կամ 25.0%-ը, «միջին վստահություն»՝ 25-ը կամ 62.5%-ը, «ցածր վստահություն»՝ 5-ը կամ 12.5%-ը: «Ընտրանքային հետազոտություններին» «բարձր վստահություն» է նշել 7-ը կամ 17.5%-ը, «միջին վստահություն»՝ 26-ը կամ 65.0%-ը, «ցածր վստահություն»՝ 7-ը կամ 17.5%-ը:



Հավելված 5. Շահառուների հետ հանդիպման արձանագրություն

Հարց 1.

Տիկին Գոհար Հարությունյան, ՀՀ բնապահպանության նախարարություն

- Մենք ընկերություններից տեղեկություն ենք հավաքում թափոնների մասին: Առկա՞ է արդյոք որևէ փորձ կապված էկոլոգիական թափոնների հետ: Ինչ վերաբերվում է առանձին ընկերությունների ֆինանսական վիճակի մասին տեղեկությանը, հասկանալի է, որ տեղեկությունը պետք է լինի գաղտնի: Բայց ի՞նչ կասեք թափոնների մասին տեղեկության վերաբերյալ: Ինչպե՞ս կարելի է խրախուսել ընկերություններին, որպեսզի բացահայտեն այս տեղեկությունը:

Պատասխաններ.

Պարոն Ստեփան Մնացականյանը՝ *ՀՀ ԱՎԾ նախագահը,* նշեց, որ այստեղ պետք է հիշել պաշտոնական վիճակագրության վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներից 6-րդ սկզբունքը, որն ապահովում է հավաքագրված տվյալների գաղտնիությունը: Նա նաև հավելեց, որ բնապահպանական հիմնահարցերի հետ կապված տեղեկության հետ մեծ մասամբ առնչվում է ոչ այնքան վիճակագրական ծառայությունը, որքան վարչական տեղեկատվական մարմինները:

Պարոն Քարսթեն Զանգենբերգը՝ *կարճաժամկետ փորձագետ Դանիայի վիճակագրությունից,* պատասխանեց նույն հարցին՝ նշելով, որ նման տեղեկությունը հազիվ թե կարելի է բացահայտել, քանի որ վերջիվերջո դա կհանգեցնի սպառողների վստահության կորստին:

Հարց 2.

Պարոն Կարեն Հակոբյան, *Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Վիճակագրության ամբիոն*

- Իր ներկայացման մեջ պարոն Զանգենբերգը կարևորեց ժամանակի ընթացքում վիճակագրական տվյալների համադրելիությունը: Հատկապես Հայաստանի դեպքում ժամանակի առումով տվյալների համադրելիությունը մեծապես կարևոր է: Օրինակ, եթե վերցնենք ազգային հաշիվների ցուցանիշները, դասակարգման և մեթոդոլոգիական փոփոխությունների պատճառով հետահայաց համադրելիությունը դառնում է բարդ և նույնիսկ անհնար: Այս խնդրի հետ կապված ի՞նչ կարող եք առաջարկել:

Պատասխաններ.

Պարոն Քարսթեն Զանգենբերգը պատասխանեց, որ չնայած սա հսկայական առաջադրանք է, վիճակագրական ծառայությունը լավագույն մարմինն է, որ կարող է լուծել այս խնդիրը, որն առկա է ոչ միայն Հայաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում:
Պարոն Ստեփան Մնացականյանը նշեց, որ Հայաստանի՝ հետխորհրդային երկիր լինելն իրավիճակն է՛լ ավելի է բարդացնում հասարակության մեջ տեղի ունեցող որոշ փոփոխությունների պատճառով: Դրանից բացի կա մեկ այլ խնդիր՝ ռեսուրսների պակասը: Չնայած դրան, ՀՀ ԱՎԾ-ն կփորձի կատարել հետահայաց հաշվարկ և ընդգրկել հետխորհրդային տարիները:

Հարց 3.

Պարոն Ալեսանդրո Զանոտտա, Հայաստանում ԵՄ պատվիրակություն

- Դուք երբևէ իրականացրե՞լ եք հետազոտություն վիճակագրության սպառման արդյունավետության վերաբերյալ, որպեսզի պարզեք, թե որ ոլորտները բարելավման կարիք ունեն: Կա՞ն արդյոք որակական տվյալներ սպառողների բավարարվածության վերաբերյալ:

Պատասխաններ.
Պարոն Ստեփան Մնացականյանը պատասխանեց, որ իսկապես կարևոր է տարածման գործում ընդգրկել ավելի մեծ թվով սպառողներ՝ իրազեկված լինելով, թե ո՞ւմ է նպատակաուղղված ՀՀ ԱՎԾ-ն: Նմանապես կարևոր է նաև ընդլայնել սպառողների շրջանակը, դասակարգել նրանց ըստ առաջնահերթության, հաշվի առնել նրանց կարծիքը և հետևել սպառողների զարգացմանը:
Պարոն Քարսթեն Զանգենբերգը նաև նշեց, որ սա ռազմավարության գերակայություններից է և անհրաժեշտ է ձևավորել ռազմավարությունը և դրա սկբունքներն այնպես, որ այն ապահովի հրապարակայնություն, ի թիվս այլ սկզբունքների:

Հարց 4.

Պարոն Ալեսանդրո Զանոտտա, Հայաստանում ԵՄ պատվիրակություն

- Կա՞ն արդյոք իրազեկվածության բարձրացման ծրագրեր՝ կապված դպրոցներում կամ այլ կրթական հաստատություններում վիճակագրության տարածման հետ:

Պատասխաններ.
Պարոն Ստեփան Մնացականյանը նշեց, որ ՀՀ ԱՎԾ-ն ունի կրթական հաստատությունների միջոցով վիճակագրության տարածման փորձ: Առաջին Թվինինգ ծրագրի շրջանակներում պատրաստվել էին հատուկ թռուցիկներ և

բուկլետներ դպրոցներ կատարած այցերի միջոցով իրազեկության բարձրացման նպատակով:

Հարց 5.

Պարոն Ալեսանդրո Զանոտտա, Հայաստանում ԵՄ պատվիրակություն

- Ինչպե՞ս կարելի է բարելավել ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք էջը՝ թիրախավորելով և օգնելով սպառողներին ավելի հեշտությամբ գտնել անհրաժեշտ տվյալները:

Պատասխաններ.

Պարոն Ստեփան Մնացականյանը պատասխանեց, որ ներկայիս Թվինինգ ծրագրի շրջանակներում պետք է բարելավվի վիճակագրական տեղեկատվության օգտագործումը և հույս հայտնեց, որ մինչև ծրագրի ավարտը ՀՀ ԱՎԾ-ն կունենա համապատասխան առաջարկություններ, թե ինչպես բարելավել վիճակագրական տարածման համակարգը: Նա շեշտեց, որ սպառողներին պետք չէ մեղադրել, քանի որ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք էջն ընդամենը 16 տարեկան է, և իրենք շատ լավ գիտակցում են որ դեռևս շատ անելիք ունեն:

Տիկին Անեգրետ Վուլֆը պատասխանեց նույն հարցին՝ կարևորելով կայք էջի կառուցվածքը և որոնման հնարավորությունների օգտագործումը: Նա նշեց, որ անկախ այն հանգամանքից, թե որքան որակյալ է կայք էջը, մարդկանց համար միշտ դժվար է որևէ բան գտնել: Այսպիսով, վիճակագրական ծառայությունը պետք է գտնի կիրառվող բառերի և վիճակագրական տերմինների միջև կապը:

Հավելված 6. Շահառուների հետ հանդիպման վերաբերյալ մամուլի լուսաբանում

http://armenpress.am/arm/news/824570/daniaci-pordzagety-bardzr-e-gnahatum-hh-avts-i-ashkhatanqy.html

Դանիացի փորձագետը բարձր է գնահատում ՀՀ ԱՎԾ-ի աշխատանքը

Մեկնարկել է ԵՄ երկրորդ Թվինինգ ծրագիրը, որը միտված է բարելավելու Հայաստանի վիճակագրական ծառայության աշխատանքը: Արմենպրես-ի փոխանցմամբ՝ նոյեմբերի 4-ին վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ հարցեր քննարկելու ժամանակ այս մասին ասաց ՀՀ ԱՎԾ նախագահ Ստեփան Մնացականյանը:
«Թվինինգը երկամյա ծրագիր է և ինչպես առաջին Թվինինգը, որն իրականացվել էր 2011-2013 թ.-ին, այնպես էլ երկրորդը, իրականացվում է Դանիայի վիճակագրական ծառայության կողմից: Առաջին Թվինինգ ծրագիրը բավականին էական էր, իսկ արդյունքները՝ բավականին տպավորիչ», հավելեց Մնացականյանը:
Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետ Անեգրետ Վուլֆը նշեց, որ նախորդ տարի սահմանված էին մի շարք հավակնոտ ծրագրեր, որոնցից էին թվային տվյալների ստեղծումը armstatbank-ի միջոցով, բայց ամենակարևորն այն է, որ հնարավոր էր ստանալ բոլոր անհրաժեշտ տվյալները:
«Որպես վիճակագրական ծառայությունների տվյալների ստացող՝ մենք պետք է հասկանանք՝ ինչպես ձեռք բերել տվյալները: Սրանք այնպիսի բարելավումներ էին, որ կարելի էր կարծել՝ հնարավոր չէ նման արդյունքների հասնել կարճ ժամանակում: Եվ ես վստահ եմ, որ ձեր լուրջ ջանքերի շնորհիվ ձեր բոլոր ռազմավարական ծրագրերը կիրականացվեն», ասաց փորձագետը:

Թվինինգը համագործակցության գործիք է շահառու երկրի պետական հաստատության և ԵՄ անդամ պետության համապատասխան հաստատության միջև: 2015 թվականի օգոստոսին մեկնարկել է 2 տարի տևողությամբ վիճակագրական Թվինինգ ծրագիրը, որի շահառուն ՀՀ ԱՎԾ-ն է, իսկ իրականացնող գործընկերը՝ Դանիայի վիճակագրությունը: